ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-11-Ո-17
2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՀԱՅԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Դատական խորհուրդների եվրոպական միավորման նախագահի ներկայացրած հրավերը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասով, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 10-րդ մասով, 89-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Դատական խորհուրդների եվրոպական միավորման 2018 թվականի «Դրական փոփոխության ուղղորդումը» խորագրով վեհաժողովին մասնակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի անդամ Հայկ Հովհաննիսյանին սույն թվականի մայիսի 29-ից մինչև հունիսի 1-ը ներառյալ գործուղել Պորտուգալիայի Հանրապետության Լիսաբոն քաղաք:
2. Գործուղման հետ կապված ծախսերը հատուցելու նպատակով Հայաստանի Հանրապետության դատարանների պահուստային ֆոնդից «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կենտրոնական մարմնին հատկացնել 307 958 (երեք հարյուր յոթ հազար ինը հարյուր հիսունութ) ՀՀ դրամ՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր» 422200 հոդվածով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2018թ. մայիսի 24
ք. Երևան